իրավունք ունեին ազատորեն իրենց կրոնը դավանելու։ Այդպիսի ժողովուրդներն ու համայնքները կոչվում էին «ջիզյե գողար» — جزیه گذار» («ջիզյա հատուցող»), կամ «զիմմի» («պարտապան») ժողովուրդներ կամ համայնքներ։ 16—18-րդ դարերում հրապարակված գերագույն «Դիվան-ալ-սադարաթի» ինչպես նաև շեյխ-ուլ-իսլամների ու մուֆթիների ֆեթվաներում, որոնք մեծ մասամբ հաստատված են ժամանակի շահերի կողմից տրված ֆերմաններով, բազմիցս շեշտված է, որ «հանոնավոր կերպով ջիզյա հատուցող հայերին ոչ ոք իրավունք չունի սահմանելու, որ քրիստոնեական հավատքը թողնեն և մահմեդականություն ընդունեն»[1]։

Հայ ռայաթներից գանձվող գլխահարկը և տարիների ընթացքում նրա վրա բարդվող վերադիր գումարներն ու տոկոսները («թաֆավութ» և «ֆար'» — تفاوت و فرع) բավական խոշոր գումար էին կազմում և նշանակալից տեղ էին գրավում պետության ֆինանսների մեջ։ Շատ հաճախ որոշ գյուղերից ստացվող գլխահարկը կազմում էր նույն գյուղից գանձվող հարկերի ընդհանուր գումարի կեսից ավելին։

Առաջին հայացքից թվում է, թե գլխահարկի ծանրությունը ինքնին պիտի պատճառ դառնար մեծ թվով, հատկապես չքավոր հայերի, հավատափոխության, սակայն պետք է ասել, որ հայ աշխատավոր ժողովուրդը նյութական խոշոր զոհողությունների գնով, ամենուրեք, համառորեն դիմադրում էր և հաստատակամորեն մերժում բազմիցս կատարվող հավատափոխության առաջարկները։ Հայտնի է, որ 17-րդ դարում կոտորածի սպառնալիքի տակ մասսայական հավատափոխության դեպքեր տեղի ունեցան Իրանի խորքերը քշված հայ գաղթականության խիստ մեկուսացած մի քանի բեկորների հետ հատկապես Ֆարսի և Մազանդարանի նահանգներում, իսկ հայ ժողովրդի հիմնական մասսան, ինչպես մայր հայրենիքում, այնպես նաև Սպահանում և Նոր Ջուղայում, վճարելով ջիզյան՝ վճռականորեն պայքարում էր ասիմիլյացիայի փորձերի դեմ։

Պարզ է ուրեմն, որ այս դեպքում, երբ համաձայն գոյություն ունեցող շարիաթական օրենքների, հայերը ծանր հարկատվության գնով շարունակում էին պահպանել իրենց հավատքը, հայ աշխատավորության բռնի ասիմիլյացիայի գործը հաջողությամբ չէր կարող պսակվել։ Մի կողմ թողած դեռ այն փաստը, որ հայ ազգաբնակչության ասիմիլյացիան օբյեկտիվորեն չէր բխում պետության շահերից, որովհետև այդպիսով պետությունը զրկվում էր բավական շոշափելի եկամուտի աղբյուրից։ Սակայն շնորհիվ այն բանի, որ պետության օրենսդրական ֆունկցիաները դտնվում էին այդ հարցում անմիջապես շահագրգռված մուսուլման բարձրաստիճան հոգևորականության ձեռքում, վերջիններիս հաջողվում էր իրենց կողմից հրապարակվող ֆեթվաներով անցկացնել մի շարք օրենսդրական միջոցառումներ և հայ ազգաբնակչության որոշ խավի մեջ զգալի հունձ կատարել, կանգնեցնելով նրանց հավատափոխության ուղու վրա։

Շիաների մոտ վաղուց գոյություն ուներ, այսպես կոչված Իմամ-Զահֆարի օրենքը, ըստ որի զիմմի ռայաթների մուսուլման դարձած ազգականները իրավունք ունեին իրենց քրիստոնյա ազգականների ունեց-

[1] Մատենադարանի պարսկերեն վավերագրեր (ՄՊՎ) թղթապանակ 1բ, վավ. №№ 132ա, 132բ, 132գ, 145 և այլն։